այլ և մայրաքաղաքաց ծանրակշիռ թերթերը Պետերբուրգի և Մոսկուայի՝ մի շարք երկար՝ յօդուածոց նուիրեցին խնդրոյս։ Ընթերցողք անտարակոյս կը հասկնան որ՝ առանձնական երկու քաղաքաց շահերը չէին որ կը խօսեցնէին մայրաքաղաքաց թերթերը, այլ ընդհանուր ազգային շահը։ Թէոդոսիոյ կամ Սևաստոպոլի, այս երկու քաղաքաց միոյն նաւահանգիստը բաց պիտի լինէր վաճառական նաւերու համար, հարաւային և միջին Ռուսաստանի բոլոր հում ապրանքը պիտի իջնէր այն նաւահանգիստը և անտի պիտի անցնէր յԵւրոպա, դիւրակենցաղ կենաց հազար ու մէկ տեսակ ապրանք Եւրոպայէ ի Ռուսաստան բերող նաւերուն միջոցիւ։

Սևաստոպոլ արդէն այդ առանձնաշնորհութիւնը կը վայելէր արևելեան երկրորդ պատերազմէն վերջը. ուստի քաղաքացիք ամենայն ջանք և գործք ի կիր արկին այդ շահաւէտ առանձնաշնորհութիւնը ընդ միշտ իրենց քաղաքին սեփականելու։

ՍԵՒԱՍՏՈՊՈԼ ԹԷ ԹԷՈԴՈՍԻԱ

Վերնագրով երկայնաճառ յօդուածները պարզեցին խնդիրը, իւրաքանչիւր յօդուածագիր իւր մտաց համեմատ փաստեր ի մէջ բերելով։ Սևաստոպոլցիք և նոցա հետ համաձայն այլ շատ նշանաւոր անձինք, որք բաց ի անձնական շահէ, բայապէս իրենք զիրենք պարտական կը ճանչնային Սեւաստոպոլի շահը պաշտպանել, ձայն վերցուցին թէ՝ « Սևաստոպոլ արժանաւոր է ամենայն առանձնաշնորհութեանց, նա Ս. արևելեան պատերազմին միջոց պատուար կեցած է Ռուսաստանի, յինքն